№ 45 Մարտի 24 (Ապրիլի 5) 1879 Մարտի 24 (Ապրիլի 5) № 45

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 25-ԻՆ

դոկտոր ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կրկնելու է Թիֆլիսի ՍՕԲՐԱՆԻԱՑՈՒՄ իր հայերէն դասախօսութիւնը

«ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ»

Նոյն պրոգրամայով, որով կարդացել է մարտի 11-ին Թիֆլիսի արհեստաւորների ընկերութեան մէջ։

Տոմակները կարելի է ստանալ «ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ մէջ և «Մշակի» խմբագրատանը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր գուշակութիւնները արդարացան։—Ներքին տեսութիւն։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Հայ կաթոլիկների խնդիրը։ Թարգէմանի էֆքիար լրագրի թղթակցութիւնը։ Նամակ Պարսկաստանից։ — «Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։— Տեղեկացոյց։—Բանասիրական։ Տնտեսական նկատողութիւններ։

ՄԵՐ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՐԴԱՐԱՑԱՆ

Մարտի 22-ի մեր առաջնորդող յօդուածի վերջում մենք ասում էինք. «Կրօնական երկպառակութիւնները ամենալաւ միջոց են ազգութեան խնդիրը սպանելու համար։ Գուցէ թիւրքաց տէրութիւնը տեսնելով որ Հայոց ազգային խնդիրը հսկայական քայլերով առաջ է գնում, աննկատելի կերպով ինքն է դրդել Հայերի մէջ կրօնական վէճերը։»

Այդ խօսքերը մենք ասացինք մարտի 22-ին առաւօտեան, իսկ նոյն օրը երեկոյեան ստացվեցաւ հետևեալ հեռագիրը Կ. Պոլսից, որ արդարացրեց մեր գուշակութիւնները. «Սուլթանը, ասում էր հեռագիրը, մի՛ իրադէ ստորագրեց, որով Հայոց կաթոլիկ համայնքի կրօնական և քաղաքական գլուխ։»

Ուրեմն մեր գուշակութիւնները, որոնց շատերը գուցէ, թերահաւատութեամբ վերաբերվեցին, այժմ արդարացան։ Ինտրիգաներ անողը նոյն իսկ թիւրքաց տէրութիւնն է։ Նա նշանակում է իր իրադէով Հայոց կաթոլիկների համայնքի գլուխ, որպէս զի դժգոհութիւն յարուցանի հակահաւատներ Հայ-կաթոլիկների մէջ, որոնք չեն կամենում պապի անսխալութիւնը ճանաչել....

Այդպիսով, ի հարկէ, մեծ դժգոհութիւններ, գուցէ կռիւներ և անկարգութիւններ կարող են ծագել, լուսաւորչական Հայերն էլ անտարբեր չեն մնայ դէպի իրանց կաթոլիկ Հայրենակիցների շրջանում ծագած խռովութիւնները,—և, ահա՛, կրօնական խընդիրներով, կրօնական վէճերով, եկեղեցական երկպառակութիւններով ու խռովութիւններով, յափշտակվելով, Հայերը, որոնք շատ են սիրում կրօնական վէճերը, գուցէ կը մոռանան իրանց ազգային խնդիրը, Հայաստանի ինքնավարութեան հարցը....

Այդպէս է մտածում թիւրքաց տէրութիւնը և եթէ Հայերը կընկնեն այդ որոգայթի մէջ, թիւրքաց տէրութեան նենգաւոր դիտաւորութիւնները, ճշմարիտ, կարող են իրագործվել....

Մեր դարը կրօնական վէճերի դարը չէ, թո՛ղ այդ լաւ հասկանան Թիւրքիայի մեր եղբայրակիցները։ Թո՛ղ իրանց սառն և խելացի վարմունքով ոչնչացնեն Ռ. Դրան ձեռքով լարված բոլոր որոգայթները....

Թո՛ղ չը յափշտակվեն իրանց թեթևամիտ և տգէտ լրագրու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

I.

Ցոյս ունեմ ընթերցողը դեռ մոռացած չը լինի մեր տորոնի պատմութիւնը։ Տորոնը իր տէրերի համար շատ մեծ տնտեսական նշանակութիւն ունէր. նա կազմում էր գիւղատնտեսական արդիւնաբերութեան բաւականին նշանաւոր մի ճիւղը։ Տորոնատէրերը հարուստ էին և բաղդաւոր իրանց համար։ Հանգիստ ու հանդարտ շարժում էին նրանք մի անգամ լարուած մեքենան, որի փրկարար զօրութիւնը արդէն վաղուց փորձել էին, իմացել և էլ բաց չէին կամենում թողնել։ Ցանկարծ այցելութիւն է գալիս ալիզարինը, քիմիական գիտութեան մի նոր արարածը, և սկսում է անխնայ թուլացնել իր հակառակորդի ոյժը։ Մրցութեան միջոցները հաւասարութիւնից դուրս են գալիս. — ալիզարինի էժանագինութիւնը և կատարելագործութեան ընդունակութիւնը մահուան հարված են տալիս տորոնի արդիւնագործութեան։ — Ամբողջ մի տնտեսական ճիւղի արդիւնքը աւելորդ է դառնում և կորչում։ Տորոնատէրերի հարստութեան աղբիւրը կտրվում է։ Չը զգալ, չը հասկանալ այդ մեծ տնտեսական վնասը չէր կարելի. փոփոխութիւնը յանկարծակի էր։

Այդպէս աչքի ընկնող ու զգալի փոփոխութիւնների մի քանի ուրիշ օրինակներ էլ կարելի կը լիներ թուել այստեղ. բայց այս ևս բաւական է. սա նոյնպէս պարզ ցոյց է տալիս յանկարծակի փոփոխութիւնների ազդեցութիւնը տնտեսական գործերում։ Այդպիսի փոփոխութիւնները բաւականին ուշ են մոռացվում։

II.

Բայց կան կեանքի մէջ շատ ուրիշ երևոյթներ, որոնք արտաքին ձևով բոլորովին նման չեն վերև յիշածին, նրանց ոչ՝ոք չէ պահում իր մտքում և որոնք այնու ամենայնիւ մի և նոյն ազդեցութիւնը ունեն տնտեսական կեանքի վրա և հասցնում են մի և նոյն հետևանքին, ի հարկէ մասնաւոր բացառութիւններով։ Բանն այն է, որ մի որ և է արդիւնաբերութիւն կարող է անօգուտ դառնալ և մի յանկարծակի արկածից և աստիճանաբար մեծացող ձախորդ հանգամանքներից։ Ալիզարինը կարող էր տորոնի արդիւնաբերութիւնը նոյնպէս փչացնել, եթէ և այնպէս յանկարծ չերևար մեր վաճառականոցում (թէև վաղուց յայտնի էր), այլ ամբողջ տասն, քսան տարի աստիճանաբար սկսէր ազդել գների վրա, աստիճանաբար անշահաւէտ դարձնել տորոնի արդիւնաբերութիւնը։ — Գուցէ այն ժամանակ շատ ուշ նկատէին վաճառականական ձախորդութեան հիմնական պատճառը, գուցէ ամենևին չը նկատէին շատերը։ Այս խօսքերը մենք ասում ենք այն հիմքը ունենալով, որ և այժմեան մեր արդիւնաբերութեան մէջ սխալներ կան, որոնք բերելու են միևնոյն թշուառ հետևանքներին, բայց որոնք ընդհանուրի համար աննկատելի են, ու անհասկանալի. իսկ անհասկանալի են, որովհետև փոփոխութիւնները կատարվում են շատ կամաց, երբեմն մութ, շատ անգամ անզգալի։ Քննել պատճառները, բարձրանալ դէպի հիմունքը — չէ կամենում ոչ ոք։ Բաւական է, մտածում է նա, որ ես այժմ օգտվում եմ այս գործից. նա ինձ տալիս է այն, ինչ որ ես ցանկանում եմ, ես մինչև այժմ դեռ անշնորհակալ չեմ մնացել... Եւ շարունակվում են զանազան նախագծեր, պլաններ կազմվել և այլն։

Բայց արդեօք չէ կարող պատահել, ինչպէս շատ անգամ և լինում է, որ երբ դու եռանդով աշխատում ես քո ընտրած արդիւնագործութեան մէջ, երբ դու մտքումդ հազարաւոր օդեղէն ամրոցներ ես նախագծում, փոքր՝ի շատէ ազատութիւն ես տալիս երևակայութեանդ ցնորքներ ստեղծելու.... այդ ժամանակ քեզ անծանօթ հանգամանքներ ազդում են քո ապրանքիդ պահանջի վրա, պակասեցնում են նրան կամ ուրիշ անաջող պայմանների ենթարկում։ — Ջանքերիդ արդիւնքը արդէն չէ տալիս այս տարի քո յուսացածը. «Է՛հ, ասում ես, ձախորդ տարի էր, ով գիտէ, որ մէկ պատճառից է եղել. գալ տարի յոյս բաղդին լաւ կը լինի բոլորը։» — Հիմնական պատճառներ իմանալը շատ կը հեշտացնէր գործը. ուղիղ ցոյց կը տար թէ արդեօք այդ ձախորդութիւնը պատահական ազդեցութիւնների հետևանք էր, թէ արմատական փոփոխութեան արգասիք և թէ այս վերջինը որչափ մեծ պէտք է լինի, ինչ արագութեամբ պէտք է զարգանայ և այլն։

III.

Մասնաւոր ներգործութիւնները, արտաքին ճնշումները շատ անգամ բաղադրում են գործը, մթնացնում են արմատական փոփոխութեան դործը, երբեմն բոլորովին այլայլում։ Մենք խօսում ենք այնպիսի խոշոր երևոյթների վրա, որոնց որոշ գաղափար տալու համար փոքր ի շատէ խելացի հայեացքը բաւական է։ Գիտենալ վաճառականոցի ապագայ տատանումը իր բոլոր մանրամասներով կամ իւրաքանչիւր դէպքում ու գործում առհասարակ այնքան հեշտ չէ, իսկ երբեմն անկարելի է։ Մեր պահանջն էլ այն չէ, որ մինչև վերջին կէտը բոլորը հասկացած ու պարզած լինի, երբ նա շատ դժուար է կամ անկարելի. գոնէ, ասում ենք, հասկանան այդ կեանքի իրողութիւնները և երևոյթները։ Երբ հնարում են մի որ և է մեքենայ, գտնում են նոր քիմիական արհեստագործական բաղադրութիւն, կարողանան գնահատել իսկոյն հանքամանքների ոյժը, յարմարվել նոր պահանջներին, չը յամառեն այնտեղ, ուր բոլորովին անօգուտ է նա։ Իսկ այնպիսի դէպքերում, երբ միջոց ու կարողութիւն կայ ապագան նախագուշակելու, աշխատել այդ անելու ու նրա համեմատ կարգադրել ոյժերը։ Այդ պայմաններին համապատասխանելու համար հարկաւոր է գիտութիւն և գիտութեան սէր. կարևոր է աւելի շարժունութիւն և ձեռնարկութեան ոգի. անհրաժեշտ են բացայայտողներ և սրանց լսող, խրախուսող ու պահպանողներ։

Թէ չէ բարկանալ անյաջողութեան վրա և վրիժու ասել թէ թող հէնց սնանկանամ, ես ձեռք չեմ վերցնի սովորական գործից—դա խելագարութիւն է։ Ո՞վ է կրում վնասը։—Առնում էք դուք ձեր ձեռքը մի քանի տորոնի արմատներ, անիծում էք նրան, հազար յիշոցներ տալիս և բարկութեամբ գետնին խփում թէ ինչ։ Տորոնը, ճշմարիտ է, ձեզ խաբեց. բայց մեղաւորը այժմ դուք էք, որ չը կարողացաք յարմարվել նոր պայմաններին։ Տորոնը օրհնեցէք, որ նա մինչև այսօր ձեզ այնպէս լաւ ծառայում էր, ձեր հարստութեան պատճառ է եղել և որ այսօր էլ սովորեցնում է ձեզ հիմունքով փոխել ձեր արդիւնագործութեան կերպը, սպառնում է ձեզ սնանկացնել, եթէ շարունակէք տգիտութեան մէջ մնալը, ինչպէս մինչև այժմ։

Տնտեսական յառաջադիմութիւնների և փոփոխութիւնների ազդեցութիւնը այնպէս ակներև և կործանիչ չեն լինում միշտ, ինչպէս տորոնինը, բայց դրան նման խոշոր երևոյթների քննութիւնը միշտ փոքր ի շատէ աւելի պարզ և հասկանալի անում մի քանի բաներ։ Այդպիսի մեծ տնտեսական արկածների առիթով էլ չը տուին մեզ լաւ մշակված յօդուածներ, թուեր չը ժողովեցին, ժողովրդի դրութիւնը այդ խնդրի վերաբերմամբ չը քննեցին և մեր մտաւոր տեսութեան համար անմարս ու անմշակ անցան մեր տնտեսական կեանքի մի քանի հիմնական ու մեր սեփական երևոյթները։

IV

Օրինակներ մեր ասածը հաստատելու համար շատ կան. բաւական է յիշել շերամապահութեան և բամբակի արդիւնագործութեան արդէն փոքր ի շատէ յայտնի փոփոխութիւնները։ Թէ այն և թէ միւս գործում կարելի է թուել շատ և շատ դէպքեր, ուր թշուառութեան պատճառը եղել է տգիտութիւնը և անընդունակութիւնը։ Այժմ ևս, երբ բամբակի նշանակութիւնը բարձրանում է և տէրութիւնը իր կողմից աշխատում է նպաստել տեղական արդիւնագործութեան 1) չը կան այն պայմանները, որ գործի աջողութեան համար հարկաւոր են։ Փոքր ի շատէ գործին ծանօթ եղողը, կամ ով յիշում է հէնց մեր լրագրներում երևացող աղքատ տեղեկութիւնները, կարող է նկատել իսկոյն թէ որչափ մեծ պակասութիւններ կան մեր արդիւնագործութեան մէջ։ 2) Կան անփոփոխելի և անուղղելի պատճառներ, օրինակ կլիման, երկրի դիրքը, որոնց դէմ մարտնչել անկարելի է. բայց կան և շատ յարմարութիւններ ու կատարելագործութիւններ, որոնք արդիւնագործութեան զարգացման մեծ

*) 1., С. П. Б. Вѣдомости 1878 № 331, Обзоръ 1878 № 333

2., Բամբակացանութիւնը Երևանի նահանգում «Մշակ» 1875 № 51, և 1876 №3.

թեան քարոզներով՝ թէ ժամանակ է բոլոր հայ բողոքականներին և հայ կաթոլիկներին միանալ լուսաւորչական եկեղեցու հետ, որպէս զի մի զօրեղ ազգութիւն կազմեն....

Թիւրքաց տերութիւնը ուրիշ բան չէ կամենում, եթէ ոչ թուլացնել ազգը նրա անդամների մէջ կրօնական անվերջանալի վէճերը, եղբայրների մէջ ատելութեան սերմեր սերմանելով։

Մինչև անգամ եթէ աջողվեր էլ կրկին լուսաւորչական եկեղեցուն դարձնել բոլոր հայ բողոքականներին և հայ կաթոլիկներին, ինչպէս այդ քարոզում է Կ. Պոլսի հայոց մամուլը, այնու ամենայնիւ դա ոչ թէ միայն բաղդ չէր լինի ազգի համար, այլ կը լինէր մինչև անգամ դժբաղդութիւն։

Այդ միտքը մենք կը բացատրենք ուրիշ անգամ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վաղը, կիրակի մարտի 25-ին գոկտոր Գրիգոր Արծրունի կրկնելու է Թիֆլիսի Սոբ-

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Ճիզվիթութիւնն իւր համբաւոյն արժանի գործ մ՝ալ ցոյց տուաւ։

Ինչպէս որ երէկ ծանուցինք, Արևելեան կաթոլիկ Հայոց Պատրիարք Գիւրգեան Յոհան գերապայծառն անցեալ գիշեր Պատրիարքարանէն մեկներ է՝ իւր հետ տանելով ազգային տումարներն ու բոլոր թղթերն, ինչպէս նաև սնտուկներով զանազան ինչք։ Գեր. Գիւրգեան զղջացեր է տարիներով Ս. Պապին դէմ բռնած ըմբոստական ընթացքից վրայ, և Հռոմէական եկեղեցւոյ գիրկը կը վերադառնայ, միանգամայն նամակաւ մը ծանուցանելով Բարձր. Մեծ. Նպարքոսին թէ կաթոլիկ եկեղեցւոյ գլուխը միփայն Ս. Պապը լինելով, ինք անոր ուղղակի իշխանութեան ներքև կը դառնայ, ուստի անցագիր մը կը խնդրէ Հռոմ երթալու, և կը յայտարարէ թէ ինք Հ. Գ. Էնֆիէճեանը փոխանորդութենէ ձգած է, հետևաբար անոր պաշտօնը դադրած է Ռ. Դրան քով։

Այս անակնկալ դէպքը շատերու զարմանք, ոմանց ցաւ, ուրիշներու ալ տարապայման ուրախութիւն պիտի պատճառէ։ Մենք՝ բարեբաղդաբար մասնակցութիւն չունենալով Հասունեանց և Հակահասունեանց վէճերուն, ամենայն անկողմնակալութեամբ կրնամք մեր կարծիքն յայտնել։ Ճիզվիթութիւնն իւր սովորական զէնքերով յաղթանակը տարաւ, Հակահասունեանց բերդը ներսէն առնլով։ Պատրիարքը կը վերցնէ և ահաւասիկ բոլոր հասարակութիւնն իբրև խաչն առանց հովուի մնալով՝ շատերը դուցէ պիտի պատրաստուին Հռոմէական կամ աւելի ճիշդ ըսելով Հասունեան կամ անդրալեռնական փարախը դառնալու։ Բ. Դուռն Արևելեան կաթոլիկ ազգայնոց նոր Պատրիարք մը պիտի տայ թէ ոչ—այս խնդիրն երկբայելի է, և Գեր. Էնֆիէճեանի բոլոր ջանից և գործունէութեան պէտք ունի։ Այսու ամենայնիւ կըսուի թէ Բ. Դուռն ևս կը վարանի նոր Պատրիարք մը տալու։ Արևելեան կաթոլիկները տասն տարիէ ի վեր աշխատեցան հասարակութիւն մը կազմելու և վախճանն այսչափ ողորմելի եղաւ։ Ճիզվիթութիւնն իրենց բազմամեայ աշխատանքը մէկ հարուածով բնաջինջ ըրաւ։ Այս բանը կը հաստատէ թէ ազգային եկեղեցի և արտօնութիւններ, ամենն ալ ընդունայն են, և երբ Հռոմէական անունը կայ, կաթոլիկ ազգայնոց եկեղեցին և եկեղեցականներն Հռոմի խոնարհ սարուկն ըլլալէ չեն կրնար դադրիլ անոր բարձր իշխանութեան ներքև դնելով իրենց ազգային հաստատութիւններն ու եկեղեցական իրաւունքները։

Երբ այս բարոյական սարկութիւնը աչքի առջև բերեմք, չեմք կրնար չը փափաքիլ որ Արևելեան Կաթոլիկ ազգայինք Հռոմի հետ իրենց յարաբերութիւնն իսպառ խզեն։ Ընդհանուր ազգային շահուց և միութեան աւելի նպաստաւոր կը լինի եթէ Հայաստանեայց եկեղեցւոյ գիրկը վերադառնան։ Բայց ցաւալի է խոստովանիլ թէ Կաթոլիկ հասարակութեան մեծ մասին միտքը դուցէ այնչափ լուսաւորուած չէ այսպիսի կարևոր քայլ մը առնլու համար։ Կարելի է որ իբրև Կաթոլիկ՝ ազգային կալուածները ձեռքէ չը հանելու համար Հռոմէականութիւնը չեն ուզեր թողուլ և աւելի հաւանական է որ գոնէ մէջերնէն շատերը Գիւրգեանի օրինակին հետևին։

Այսու ամենայնիւ մեր խօսքն ազգասիրաց ուղղեալ է, որոց անկեղծաբար մեր սիրտը բանալով՝ կրնամք համարձակ ըսել թէ Հայութիւնն և իւր ապագայն Հայաստանեայց Ե.

ծառայութիւն են անում և որոնք կախված են աւելի լայն գիտութիւնից և հեռատեսութիւնից։—Մի և նոյն պակասութիւնները տեսնում ենք նաւթագործութեան մէջ, որ առ այժմ հարստութեան աղբիւր է դարձել և այժմեան պայմաններում յաջողութիւն է խոստանում բոլոր արդիւնագործներին։—Մի և նոյնն ենք նկատում այն օրից օր դժբաղդացնող վաճառականութեան մէջ, որ շարունակվում է Նուխում, Ղախում և այլն։

Մի օրինակ։ Ռուսաստանը բաւականին մեծ քանակութեան բուրդ էր հանում արտասահման մի տաս տարի սրանից առաջ արտասահմանի, գլխաւորապէս անգլիական, գործարանների համար։ Գործարաններ չարունակվում էին շատանալ և մեծանալ, բուրդ պահանջվում էր աւելի ու աւելի. և յիրաւի Ռուսաստանը, որ վաթսուն թուականներին 65% աւելի բուրդ էր արտահանում, քան քառասուն թուականներում, 3) 1857-ից մինչև 1861 տարեկան ուղարկել է 988,326 պուդ բուրդ, իսկ հետևեալ 5 տարում (այսինքն 1862—1866 թուականներին) ևս աւելի 1,190,118 պուդ։ Կարելի էր կարծել, որ հետևեալ տարիներում պէտք է արտահանութիւնը աւելի մեծանայ. բայց թուերը ցոյց են տալիս, որ 1867 թուականին արտահանված է 762,985 պուդ, 1868-ին 593,649 պուդ և այլն։—Ի՞նչ է այդ երևոյթի պատճառը. ի հարկէ վաճառականոցի պայմանների փոփոխութիւնը և արդիւնագործութեան յառաջադիմութիւնը։—Անգլիան աւելի ու աւելի սկսել է բուրդ ստանալ իր կօլոնիաներից. Ավստրալիան, որ 1862 թուականներին ունեցել է նոր հարաւային Վալլիսում մօտ 6 միլիոն ոչխար, 1862-ին հասցնում է մինչև 11 միլիոն, Վիկտորիա կօլոնիայում 13½ հասցրել է մօտ 27 միլիոն և աւելի՝ Նոյնը Բարեյուսոյ Հրուանդանում, Նոր-Զելանդիայում, Նատալում և այլն.—ինչ վերաբերում է բուրդի յատկութեան՝ այն երկրներից ստացվող բուրդը մեծ մասամբ այնքան պատուականներիցը չէ, բայց գործարանները ու վաճառականոցներն էլ չեն պահանջում շատ քնքոյշ ու նուրբ տեսակները։

3., Эконом. обозрѣніе, Журналъ Мин. Гос. Им. Сельск. Хоз. и Лѣсовод. часть CIII.

բանիայի դահլիճում իր դասախօսութիւնը հայերէն լեզուով և նոյնպէս բարեգործական նպատակով, որ կարդացվեցաւ մարտի 11-ին Արհեստաւորների ընկերութեան մէջ։ Տոմսակները կարելի է ստանալ «Մշակի» խմբագրատանը և «Կենարօնական դրավաճառանոցի» մէջ։

—

Շաբաթ օրը, մարտի 28-ին դոկտոր Ա. Բաբայեան կարդալու է Թիֆլիսի Արհեստաւորների ընկերութեան դահլիճում մի դասախօսութիւն հայերէն լեզուով «Կրքերի ազդեցութեան մասին մարդուս առողջութեան վրա։» Պրոգրամը չը կարողացանք այս համարում տեղաւորել, կը տպենք «Մշակի» հետևեալ համարում։

—

Մեզ հաղորդում են ՇՈՒՇՈՒՑ, որ այնտեղի աղքատ դասակարգը մուրացկանութիւնը իր համար արհեստ է չինել։ Այնպիսի մարդիկ և կանայք պարապում են մուրացկանութեամբ, որոնք կարող էին մի օրինաւոր պարապմունք ունենալ և օրական ապրուստ հայթայթել։

—

Մտացանք պ. Ցարութիւն Գալստեան Գրիգորեանից 100 բուբլ յօգուտ «Արարատեան ընկերութեան»։ Պարոնը այդ գումարը նուիրում է ի յիշատակ նորերումս վախճանված իր դուստր հանգուցեալ Նատալիա Գրիգորեանի։ Հանգուցեալ օրիորդը իգական գիմնազիայի ամենալաւ աշակերտուհիներից մէկն էր։ Բացի այդ գումարը պարոնը 100 բուբլ էլ նուիրել է իգական գիմնազիայի չքաւոր աշակերտուհիներին։

—

Մեզ հաղորդում են ՆՈՒԽՈՒՑ, որ մարտի 8-ին Ցարութիւն Էլչիբէգեանցը կնոջ և որդկերանց ուղարկելով հարևանի տունը, իրան թոկով խեղդում է։ Ինքնասպանութեան պատճառները յայտնի չեն.

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են, որ այնտեղ մի տեսակ տարափոխիկ հիւանդութիւն կայ։ Ամբողջ ընտանիքը վարակվում է մի և նոյն ցաւով և հիւանդութիւնը երկար չէ տևում։

V

Այստեղ մենք նկատում ենք մի ուրիշ երևոյթ, որ նոյնպէս մեծ նշանակութիւն ունի արդիւնագործութեան վրա։ Առանձին մարդիկ շատ անգամ այսպէս են դատողութիւն անում. թէ որչափ նրանք գեղեցիկ, նուրբ թէկուզ և թանկագին արդիւնք պատրաստեն, այնքան և աւելի պէտք է լինի նրանց յոյսը, որ շուտ թէ ուշ իրանց ապրանքը կը ծախվի, որովհետև ընդունված է թէ լաւ ապրանքը իր գինը երբէք չի կորցնի։ Թէև առհասարակ դէպի գործը այդպիսի յարաբերութիւնը լաւ է, կատարելագործութեան ձգտումը շատ ուրախալի է ու ցանկալի, բայց մի քանի դէպքերում նա աւելորդ է դառնում ուրիշ աւելի զօրաւոր ու կարևոր պահանջների ազդեցութեան տակ։ Օրինակ անգլիական վաճառականոցում Ամերիկայի ալիւրը աւելի լաւ է ծախվում քան Ռուսաստանի և երբ ելմտից նախարարութիւնը կամեցաւ իմանալ այդ իրողութեան պատճառը պատասխան ստացաւ թէ ալիւրի չը վաճառվելու պատճառը գլխաւորապէս աւելի լաւ և ընտիր լինելն է. ընտիր լինելով նա աւելի թանդ է ծախվում, ուրեմն և աւելի անյարմար է գնողներից շատերի համար, որոնք բաւականանում են Ամերիկայի ժամանակին ալիւրով։ Նոյնը պանրագործութեան 4), նոյնը ծխախոտի արդիւնագործութեան 5) մէջ մի քանի առանձին պայմաններում (Մօլօրօսսիայում) և այլ ուրիշ գործերում։ Տորոնագործութեան մասին աւելորդ ենք համարում խօսել։ Նոյնը և բամբակեղէնի մրցութեան մէջ մեռաքսի ու քաթանի հետ։ Չէինք ցանկանայ միայն, որ վաճառականոցի պահանջներին յարմարելու պայմանը լինէր խարդախութիւնը կամ ապրանքի վատ ու վնասակար յատկութիւնը։ Պարզենք մեր մտքի էական մասը։ Միայն այն ապրանքները կարող են լայն տարածումն ունենալ, որոնք մատչելի են աւելի ժողովրդի մեծամասնութեան։ Այդպիսի ապրանքները ըստ մեծի մասին լինում են ամենաանհրաժեշտ և անշուայլ պահանջներին բաւականութիւն տուողներից։ Արդիւնագործութիւնը ծառայելու մեծամասնութեան՝ դա գլխաւոր յառաջադիմեցնող գործիչներից մէկն է։ Եւ նպատակ դնելով մատչելի արդիւնք տալ հասարակութեանը՝ պէտք է այնուհետև բոլոր ջանք ու ոյժը գործ դնել այն բանին, որ պատրաստվի ապրանքը, որչափ կարելի է լաւ և աւելի ևս ածանգին։ Այս վերջին երկու պայմանները պէտք է միշտ միմեանց կից լինեն և անբաժան, որովհետև անարժան ածանգութիւնը չուտով ինքն իր համար կործանման խորխորատ կը պատրաստի, ինչպէս այդ եղել է մեր արդիւնագործութեան նիւթերի շատերի վերաբերմամբ և օրինակ ամերիկական պանրի հետ անցեալ երկու տարիները անգլիական վաճառանոցում։ Միայն պայման դնելով իր համար ածանգութեան հետ միասին, որչափ կարելի է լաւացնել ու կատարելագործել ապրանքը, արդիւնագործը կարող է յոյս կապել թէ իր ապրանքի վաճառառանումը բոլորովին հաստատ հիմքի վրա է դրել և օրից օր աւելի ու աւելի զարգանալու ընդունակութիւնը նրան տուել։

VI

Արդիւնագործութիւնը մնալ իր հին նահապետական խանձարուրում չէ կարող, նա կամ պէտք է կատարելագործի իր այժմեան ուղղութիւնը պահելով, կամ պէտք է շատ բաներում փոխի նրան, յարմարվելով ժողովրդի աւելի մեծ բարօրութեան և օրից օր լայնացող պահանջներին։ Շատ տեղերում դեռ քուն և անշարժութիւն է տիրում. բայց ժամանակի հոսանքը արդէն ազդել է մի քանի տեղերում թէ քանդելով ու հիմնայատակ անելով առաջուայ արդիւնաբերութիւնը և թէ այս ու այն մասը կատարելագործութիւնները գործադրել սկսելով։ Կործանիչ ազդեցութիւնը երբեմն լուսաւորութեան անունով քանդում է ու փչացնում այն լաւ կողմերը, որ կապված են հնի հետ, պէտք է քննել նրանց զգուշութեամբ և զտել նրան որոմներից։ Մի և նոյնը և մեր արդիւնագործութեան մէջ. մենք ունենք շատ խելացի ու փորձառու այգեպաններ և երկրագործներ նոյն իսկ գիւղական ժողովրդի մէջ, որոնք թէ իրանց հայրերից աւանդված և թէ սեփական փորձերից ստացած զանազան միջոցներ ու հնարքներ գիտեն, ուշադրութեան արժանի հմտութիւններ ունեն, որոնք փոքր առ փոքր անհետանում են ու մեզ համար զուր տեղը կորչում։ Հարկաւոր է ժողովել այդ ցրված գործնական գիտելիքները և ըստ արժանաւորութեան գնահատել ու ընդհանրացնել։ Ինչ և իցէ պէտք է ունեցածը երևան հանելով և գցելով նրան գիտական քննութեան ու հետազոտութեան բովքի մէջ միացնել նրան գիտութեան չնորհած բաւականին առատ գանձի հետ։

VII

Արդիւնագործութիւնը փոխել կամ կատարելագործել ասացինք մենք։ Բայց հէնց այն օրից, երբ կասկած կընկնի մարդու գլխում նրա այժմեան արդիւնաբերութեան կազմակերպութեան վերաբերութեամբ և նա ցանկութիւն կունենայ նրան փոխել ու կատարելագործել, այն օրից, երբ նա նոր գութան, նոր բոյս, նոր կամ, հընձող մեքենայ կառնի իր ձեռքը, սովորական արդիւնագործութիւնը նրա համար անկարելի կը դառնայ. առանց գիտութեան, առանց խելացի գիւղատնտեսութեան ու արհեստագործութեան, գործ տեսնել այլ ևս չի յաջողվի։ Նա ստիպած կը լինի սոլորել, ունենալ մասնագէտներ, ունենալ կրթողական հիմնարկութիւններ, ունենալ արտայայտող գործիչներ։

Քամին սերմեր է թափել մեր երկրում հեռուից այս ու այն կողմ, անկարգ ու անկանոն.—կեանքը նոր պահանջներ է զարթեցրել նրա զանազան մասներում.—առաջուանից տարբեր կեանքի նշոյլներ են ցայտում։ Ներկան ազգային ձեռք մեկնելու է ձգտում. մեր պարտքն է հարթել ճանապարհը. առաջին փորձերին օգնել ամենայն կերպ.—ժողովրդի բարօրութեան վրնասող պայմաններին արգելք դնել։

Մի ուրիշ յօդուածով կաշխատենք խօսել միջոցների վրա։

Մենք ուրախ չենք, որ այս յօդուածում խառնել ենք մի քանի տեղերում արդիւնագործական և վաճառականական մասերը միմեանց հետ։ Մեր միտքը առաջինի վրա խօսելն է. բայց այսպէս արել ենք աւելի հեշտութեան համար։ Աւելի մասնաւորելով պէտք է ասենք, որ այժմ մեր քննութեան նիւթը ցանկալի է, որ լինէր գիւղատնտեսական արդիւնագործութիւնը միայն։

Մոսկվա. յունվար Գալանթար

4., «Մշակ» 1878 № 4. Մի ամիս կաթնատնտեսական ուսումնարանում

5., Щепкинъ Табачная промышленность въ Россіи

կեղեցւոյ մէջ է, և ոչ Հռոմէականութեան կամ Բողոքականութեան մէջ։ Քաղաքականապէս խօսելով, մարդ մը պէտք է ազգային ընկերութեան մը վերաբերի, և այս որչափ հոծ, միացեալ, զօրաւոր, ուսեալ և կիրթ լինի, այնչափ ևս իւր անհատական անդամները նիւթապէս և բարոյապէս զարգանալու վիճակի մէջ կը գտնուին։ Հռոմէականութիւնն ու Բողոքականութիւնն իրենց յենակէտն արտաքին ընկերութենց վրայ հիմնած են, որով արտաքին ազդեցութենց ստորադասեալ մնալով՝ կատարեալ ազգային ընկերութիւն մը կազմելու անկարող պիտի լինին, մանաւանդ քանի որ օտար տարերք աճին, անոնց հետ խառնուելով՝ իրենց ազգայնութիւնը, լեզուն և այլ պիտի կորուսանեն, ինչպէս շատ օրինակները կը տեսնուին։ Ասոնք իրենց ստրկութեամբ օտարաց յարգանքը չեն գրաւեր, քանզի Եւրոպացիք խիստ լաւ գիտեն թէ ինչ ըսել է ազգային զգացում, ուստի և անկէ զուրկ եղող մարդոց վրայ իրենց համարման աստիճանը դիւրաւ կրնայ հասկցուիլ։

Մինթէ Հելլէնք Կաթոլիկ կամ Բողոքական եղան որ Եւրոպա այնչափ համակրութիւն կը ցուցնէ անոնց. ոչ, այլ Եւրոպիոյ համակրութիւնն հիմնուած է Հելլենաց ազգային ընկերութիւն մը կազմելու և յառաջ դիմելու ընդունակութեան վրայ։ Տարակոյս չը կայ ուրեմն, որ եթէ Հայն ալ մի և նոյն ձիրքերը ցուցնէ, Եւրոպիոյ համակրութիւնն առաւել ապահովապէս պիտի դրաւէ քան թէ կրօնափոխութեամբ։ Երբ Հռոմէականութիւնը նախ ճարակեցաւ մեր ազգին մէջ, Եւրոպա տակաւին հին դրութեան ներքև էր, բայց այսօրուան օրս կրնամք ըսել թէ իւր համակրութիւնն ամենէն լուսաւոր և բարեկիրթ ազգաց համար է։

Արևելեան կաթոլիկ ազգայինք մեծապէս կը շահին ուրեմն Հայաստանեայց եկեղեցւոյ հետ միութեամբ։ Իրենց մէջ բազմաթիւ ուսեալ եկեղեցականք կան, որք ազգին մեծագոյն մասին մէջ ընդարձակ ասպարէզ կրնան գտնել գործելու վասն ապագային։ Այն ատեն փոխանակ իրենց կարողութիւններն Հասունեանց հետ վէճերով վատնելու, կամ Հռոմի մեքենայութեանց առաջքն առնլու համար ժամանակ կորուսանելու, առիթ կունենան ազգին համար գործելով պատմութեան մէջ անուն թողլու։ Բայց, ինչպէս ըսինք, այսպիսի շարժում մը մեծ լուսամտութեան կարօտ է։

(Մասիս)

«ԹԷՐՃԷՄԱՆԸ ԷՖԷՒԻԱՐ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Գ.—Շատ ցանկալի էր որ Կ. Պոլսի հարուստ ազգայիններն ալ ընկերութիւններ կազմէին, նպատակ ունենալով Հայաստանի մէջ գործել։ Այդ կերպով, թողումք բարոյական շահերն, նիւթական մեծ շահեր ալ կունենան թէ Կ. Պոլսի հարուստ ազգայիններն և թէ Հայաստանցիներն թէ մի ընկերութիւն կազմուի որ Վանի ծովին վրայ շոգենաւ բանեցունէ. միթէ քիչ շահ կունենայ։ Երեք Ամերիկացի կայ այստեղ որք միսիոնարական պաշտօն ունին, սոքա իւրեանց յատուկ նաւունին որով կայցելեն ծովեզերեայ գիւղերն. երեք Ամերիկացիների ունեցած նաւն՝ այնչափ բազմաթիւ Ասիացիների ունեցած և գործածած նաւերին մէջ ամենահաստատն և ամենամեծն է։ Դժբաղդաբար հասարակութիւն օգուտ չի ստանար այդ նաւէ, զի ճանապարհորդներն յատկացած չէ, այլ միսիոնարներին միայն։ Կը լսենք թէ այդ երեք Ամերիկացիներ գրեր են Ամերիկա որ ընկերութիւն կազմելով, մօտ ժամանակներ պիտի սկսին շոգենաւ ալ բանեցունել Վանի ծովին վրայ։ Ամօ՞թ մեզ թէ մենք ալ չաճապարեմք և երեք Ամերիկացին աւելի արժէ քան թէ 3,000,000 Հայ։ Այս գործի համար Ռօչիլտի հարստութեան հարկ չը կայ, փոքրիկ դրամագլուխն ալ կը բաւէ թէ ընկերութիւնն նախ մի կամ երկու շոգենաւ միայն ունենայ, և մի քանի նաւահանգիստներ՝ կարևորագոյն տեղերն։ Քաղաքէն մինչև Այդեստան ուր Հայեր աւելի բազմաթիւ են, մի ժամ և աւելի կը տևէ։ Ճանապարհն բոլորովին հարթ, լայն և զուարճալի է, երկու կողմերն ալ միաշար կարգով ծառեր տնկուած են՝ զորս մշտահոս առուներ կոռոգեն ամառ և ձմեռ։ Այդ պողոտայի վրա շատ դիւրին կը լինի թէ ձիաքարշ երկաթուղի (Թրամվայ) հաստատուի, կամ գէթ հանրակառքեր (օմնիպիւս) երթևեկեն։ Այսպէս Հայաստանի բնակիչներն որք բաւական բազմաթիւ են, ձմեռ և ամառ աւելի հանգիստ և աւելի աժան կերպով քաղաք կերթևեկեն և այդ հանրօգուտ գործի ձեռնարկող ընկերութիւնն ալ բաւական կը շահի։ Ամբողջ Վան գաւառին մէջ, դուք չէք տեսներ, ոչ մի տեղ կառքի երթևեկ։ Բեռնաբարձ սայլեր իւրեանց ծանր, ծանր ճռնչիւններով կը ճանձրացուցեն ձեր ականջներ։ Բնիկ տեղացիներէն յոյս չը կայ, որ մեր առաջարկի նման ձեռնարկներ լինին, զի նախ՝ շատ մեծ կարողութիւն ունեցող հարուստներ գրեթէ չը կան այստեղ. երկրորդ՝ այսպիսի բաների վրայ գաղափար տալ և նոցա համոզել շատ դժար է։ Նոքա կամայ ակամայ վարժուած են կեանքի այդպիսի աւելորդ նեղութիւններին, և կը դանդաղին թողուլ ինքնին իւրեանց նահապետական անշարժ դրութիւն։

Դ.—Արարատեան Ընկ. Վարժապետանոցն և հոն հաստատ գրանոցն։ Դ.—Արարատեան ընկ. Վարժապետանոցն բացուեցաւ յունվարի 1-ին Այդեստանի մէջ։ Այս տարի երկու դասարան միայն կարելի եղած է բանալ, երրորդ դասարանի յարմար աշակերտներ չը գտնուելով։ Ա. Դասարանն արդէն լցուած էր ընդունուած աշակերտներով, երբ Վարժապետանոցն բացուեցաւ յունվ. 1-ին, այս պատճառով բաւական նեղութիւններ կը կրեմք, զի ամեն օր աշակերտներ կը բերեն մեզ որ ընդունիմք և երբ կը յայտնեմք թէ ալ տեղ չէ մնացած Ա. դասարանին մէջ, և աշակերտների թիւն լրացած է կը սկսին սրտայոյզ կերպով լալ և պաղատիլ. կանոնաւոր վարժարան ալ տեսած չը լինելով, վարժարանական կանոններն ալ չեն հասկնար և կը թախանձեն որ իւրեանց զաւակ անպատճառ դասատիարակուի Արարատեան ընկ. հովանիին տակ։ Արարատեան ընկ. մեծ համբաւ և ազդեցութիւն ունեցած է այս կողմեր իւր վարժարանական գործունէութիւնով, ամեն հայ սիրտ կը բաբախէ այդ անուն լսած ժամանակ, մանաւանդ գիւղացիներն իրև նախախնամութիւն կը նկատեն զայն իւրեանց վրայ, և մեծ բարիքներ կը յուսան ի նմանէ։ Թէ մեր ունեցած տեղեկութիւններ սխալ չեն, Արարատեան ընկ. մաղդիր է յառաջիկայ տարին մի շատ ընդարձակ տեղ վարձել վարժապետանոցին համար, և իւր գործ, ասպարէզն աւելի ընդարձակել Վան քաղաքին մէջ։ Որովհետև ամբողջ Վանի մէջ մի դրավաճառանոց չը կայ որ ընթերցասէրների պէտքերն լրացունէ, և քերականէ, սաղմոսէ զատ ուրիշ գրքեր ալ գտնուին, Արարատեան ընկ. անհրաժեշտ հարկ համարած է մի գրանոց հաստատել վարժապետանոցին մէջ իւր սաների համար, որպէս հաստատած ալ է։ Այս առիթով մենք մի խնդիր կը մատուցանեմք ամեն հայրենասէր հայերին, նը-պաստել Արարատեան վարժապետանոցի գրանոցին, գրքեր նուիրելով։ Ո և է թուղթի կտոր անգամ ոյր վրայ Կիւթէմպէրկի անմահ գիւտն օգտակար եղած է, շնորհակալութիւնով կընդունուի։ Գրագէտներ, յիշեցէք Վանայ ապագայ սերունդն, Արարատեան ընկ. վարժապետանոցի սաներն որք ձեր թշուառ զաւակներ, ձեր եղբայրներն են, ազգի ապագայ յոյսերն։ Յիշեցէք այդ մանուկներ երբ մի գիրք կը հրատարակէք, գէթ մի օրինակ ալ նուիրեցէք Արարատեան վարժապետանոցի գրադարանին։ Հայրենասէրներ, ձեզ կը դիմեմ, մտաւոր սնունդ հայթայթեցէք Վանի երեխաներին որ անօթի չը մեռնին բարոյապէս. թէ անձնիւր հայրենասէր հայ մի գիրք նուիրէ այդ վարժապետանոցի. գրանոցին մի մեծ ծանրութիւն զգացած չէ լինիր, բայց մի գործ կատարած կը լինի, զի ամեն կողմերէ եկած այդ միական գիրքեր հաւաքուելով, մի մեծ մատենադարան կը կազմեն Արարատեան ընկ. վարժապետանոցին մէջ. բազմաթիւ մանուկներ կը կարդան, օգուտ կը քաղեն և կազատին գիրքի սովէ։ Թէ սոսկալի բան է տեսնել որ մի մարդ անօթի մնացած կը մեռնի, նոյնչափ և աւելի սոսկալի է տեսնել, որ բազմաթիւ մանուկներ մտաւոր սնունդի սովէն կը մեռնին մտաւորապէս և բարոյապէս։ Հայե՞ր օգնեցէք ձեր մտաւորապէս սոված մանուկներին, որք դրժբաղդ են եղած այսօր, զի Հայաստանի մէջ ծներ, և ամեն բանէ զուրկ են մնացեր։ Գէթ այսպիսի թեթև բաների մէջ ալ չ՚օգնէք, ուրեմն ի՞նչ կը նշանակէ ձեր բոլոր բացագանչութիւններ «Հայաստան, Հայաստան, աղաղակներ։ Կը խնդրեմ ամեն հայրենասէր Հայ խմբագրապետներէն, որ արձագանք տան ձայնիս և հրաւէր կարդան Կ. Պոլսի Հայ ժողովուրդին իւրեանց գրական նուէրներ յանձնել Արարատեան Ընկ.։ Երանի թէ ամեն հեղինակներ և թարգմանիչներ ցոյց տային իւրեանց հայրենասիրութիւն այս պարագային մէջ։

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թէհրան, յունվար

Նամակագրութեանս առիթ տուողն Թէհրանի ընթերցարանն է, որոյ մասին կարծեմ այժմ մի յիշատակութիւն աւելորդ չէ ազգային թերթերում, թէև Թէհրանցին չէ սիրում շատ ահեղաձայն գոռումներով մուկ ծնանել, և այդ պատճառաւ է որ 5—6 ամսէ ի վեր քաղաքումս հաստատված ընթերցասիրաց ընկերութեան վերաբերութեամբ մի համեստ լռութիւն պահած ենք։

Բայց այստեղ ունենալով մատուցանելու մեր շնորհակալութիւնները մի քանի անձանց իրանց ազգասիրութեան համար, լաւ համարեցինք ձեր լրագրում խօսել մի քիչ ևս այս նրա հաստատ ընկերութեան մասին։ Ընթերցասիրաց ընկերութիւնը կազմված է, ինչպէս մի քիչ առաջ ասացի 5—6 ամսէ ի վեր 20-ի չափ անդամակիցներով, Թէհրանի Հայկազնեան վարժարանի նախկին աշակերտներէն և քաղաքիս մի քանի ուրիշ ուսումնասէր երիտասարդներէն։

Այստեղ մի առ մի աւելորդ եմ համարում թուել նրա կանոնադրութեան յօդուածները, միայն այսքան բաւականանալով ասել թէ նրա գլխաւոր նպատակն է Թէհրանի ազգային լուսաւորութեան աշակից գտնվել, և երիտասարդութեան սովորեցնել որ նախկին սերնդին նմանելով ինքեանք էլ Բաքոսի բաժակին անձնազոհ չը լինեն, և մի քիչ ևս սովորեն ուսումնական զբօսանօք պարապել։

Ընթերցարանը բաց է չորեքշաբթի և ուրբաթ օրերը ճաշից յետոյ երեք ժամ շարունակ. այս որոշեալ երեք ժամերի մէջ առաջին ժամում խմբակը լուռ ընթերցանութեամբ է պարապում, երկրորդ ժամում նա ազատ է ուսումնական կամ ազգային խօսակցութեանց պարապելու։ Այս միջոցին խմում են նաև թէյ և ծխախոտ քաշում։ Իսկ երրորդ ժամում լինում են հրապարակական ատենախօսութիւններ և ճառախօսութիւններ։ Ընթերցարանական ընկերութիւնը հաւաքվում է նաև կիրակի օրերը բացառական կերպով առաւօտեան. այդ օրը դասախօսութիւններ են լինում շատ նիւթերի վրա, և գլխաւորապէս Հայոց պատմութեան վրա, որին աշխատում է ընկերութիւնս ծանօթացնել հայ հասարակութիւնը։

Մենք ստանում ենք Ռուսաստանէն «Մշակ» և «Մեղու» թերթերը. այս վերջինը ստանում ենք Դավրէժի ընթերցասիրաց ընկերութենէն և թէ ընթերցարանի անդամակիցներէն պ. Հ. Ներսիսեան խոստացաւ իւր ծախքով բերել տալ տեղիս ընթերցարանի համար։

Մեր յատուկ շնորհակալութիւնները մատուցանում ենք «Փորձ» խմբագիր պ. Աբգար Յովհաննիսեանին, վասն զի նա մեզ ուղարկում էր միշտ ձրիապէս իւր հանդէսը, բայց մեր բաղդէն վերջերս էլ չենք ստանում. ուրախ ենք որ պ. Յովհաննիսեանը, ինչպէս կարդացինք ձեր թերթում, արտօնութիւն է ստացել ամսէ ամիս հրատարակելու իւր հանդէսը։

Նոյնպէս շնորհակալ ենք գնդապետ Իւզբաշեանէն որ նա բարեհաճում է ազգասիրաբար նուիրել միշտ մի օրինակ «Մանկավարժական թերթէն» ընթերցարանիս։

Ինչպէս կերևի յիշեալ պարոնայք ի սրտէ ցանկանում են Թէհրանի յառաջադիմութիւնը և չեն զլանում իւրեանց աջակցութիւնը նորան։

Դավրիժի ընթերցարանէն թէև ստանում ենք «Լրագիր» անուն Պօլսոյ թերթը, բայց ընկերութիւնս որոշեց բերել տալ նաև «Մասիսը» և «Արևելեան Մամուլը»։

Վերջապէս Թէհրանի հայութիւնն ևս մի զարկ ստացած է այս օրերս. կը յուսանք որ երթալով յառաջադիմէ և համապատասխան գտնվի ազգի ապագայի նպատակին, առ որ դիմել պարտաւոր է ամեն մի հայ։

Մի այլ անգամ դիտաւորութիւն ունիմ ձեզ խօսելու Թէհրանի ազգային ժողովի և նորա արդեանց մասին, կը յուսամ որ ձեր ընթերցողներն Թէհրանի հայ հասարակութենէն տեղեկութիւններ տալու համար ձանձրալի չեն լինի իմ յօդուածներս, և կը յուսամ նաև նոյնպէս որ պիտի հաճիք մերթ ընդ մերթ հրատարակել իմ թղթակցութիւններս։

Տ. Մասեհեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՎԻԵՆՆԱ, 21 մարտի (2 ապրիլի)։ «Голосъ» լրագրին հեռագրում են որ Իտալիան համաձայնվեցաւ մանակցել արևելեան Ռումելիայի խառն գրաւմանը։

ՑԷՏԻՆԻԷ, 21 մարտի (2 ապրիլի)։ Անգլիան առաջարկում է Զէրնօգօրիային կապել իր հետ մի առևտրական դաշնադրութիւն այն դաշնագրի նման որ նորերում կապվեցաւ Սերբիայի և Անգլիայի մէջ։ «Новое Время» լրագրին հաղորդում են Տրնօվոյից, մարտի 21-ից որ այսօր սկսեցին քննել օրգանական կանոնադրութիւնը և վճռված է որ ժողովը ամենօրեայ լինի։

ՎԻԵՆՆԱ, 22 մարտի (3 ապրիլի)։ Աւստրիան արգելել է կենդանիների վաճառահանելը Ռուսաստանից դէպի Աւստրիա։

ԱԹԷՆՔ, 22 մարտի (3 ապրիլի)։ Գէորգ թագաւորը պատասխանելով Էփիրոսի պատգամաւորների ձեռքով իրան ներկայացրած աղրէսին, յայտնեց այն յոյսը, որ Բէրլինի կոնգրէսից սահմանված Էփիրոսի և Թէսալիայի հողերի բոլոր մասերը, Եանինայի հետ միասին, միացրած կը լինեն Յունաստանի հետ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մարտի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 75 կ., երկրորդ 96 ր. 25 կ., երրորդ $95^7/_8$ ր., չորրորդ $96^1/_8$ ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 237 ր. 50 կ., երկրորդ 233 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը 93 ր. 50 կ., երկրորդ $93^5/_8$ ր., ոսկի 8 ր. 39 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ $23^7/_{16}$ պէնս։ Տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—Հրատար. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

При понужденіи чинами Тифлисской полиціи гражданъ города къ очисткѣ и ремонту улицъ и тротуаровъ многіе изъ гражданъ отказываются отъ исполненія этого требованія на томъ основаніи, что очистка и ремонтъ улицъ и тротуаровъ лежитъ на обязанности не ихъ, а мѣстной Городской Управы, получающей съ домовладѣльцевъ для этой надобности установленую денежную плату. Приведенное заявленіе гражданъ города, даже нѣкоторымъ г. г. Мировымъ Судьямъ служило поводомъ къ освобожденію отъ взисканія лицъ, противъ которыхъ полиціею было возбуждено судебное преслѣдованіе за неисполненіе требованій по очисткѣ и ремонту улицъ и тротуаровъ города. Для устраненія объясненнаго недоразумѣнія было сдѣлано сношеніе съ Тифлисскимъ Городскимъ Головою, который 24-го февраля текущаго года за № 915 увѣдомилъ, что опредѣленія Городской Думы о переложеніи натуральной повинности по содержанію въ исправности и чистотѣ улицъ противъ частныхъ домовъ въ денежную не было, равно какъ и ежегоднаго сбора съ домовладѣльцевъ на покрытіе расходовъ по очисткѣ и перемощенію улицъ Управою не производится. Въ виду приведеннаго отзыва г. Городского Головы и на основаніи ст. 844, 845, 846, и 848, т. XIII уст. медиц. полиціи по охраненію народнаго здравія вторично приглашаю г. г. домовладѣльцевъ къ немедленной очисткѣ дворовъ, улицъ и тротуаровъ города отъ навоза и другихъ нечистотъ, а также и объ исправленіи мостовыхъ. За неисполненіе настоящаго требованія виновные будутъ преслѣдоваться и отсылаться къ суду.

Тифлисскій Старшій

Полиціимейстеръ Полковникъ *Мерклингъ.*

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ“ ՀԱՅՈՑԻ,

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԵԼՕԲԱՆԻ ԱՐՈՒՐՁԱՆԻ ԿՈՒՐՍԷԲԱ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԷՅՄԱՆ—ՀԷՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՕՆԻՆԳԻ ՊՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵ ՔԱԼԱՔԻՔ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԵԿՈՎ։

Այս տեսակ «ՓՈՐՁ» ամսագրի

Երրորդ (մարտի) համարը՝

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. I. Հայի խնդիր. վիպասանութիւն Պերճ Պռոշեանցի, II Հրպատակութեան և խղճի գաղափարը Ռուսիոյ հայոց մէջ, Կ. Կոստանեանց, III Մի ելես Կարնոյ նեղագոյն պատմութիւնից, Ա. Երիցեան, IV Սիրոյ զոհեր, բանաստեղծութիւն Գամառ Քաջիպայի, V Մի Լեհացի Սամսոնովը։ ՄԱՏԵՆ ԹՕՍՈՒԹԻՒՆ VI Տեղեկագրութիւն հայոց գաղթականութեան, տեղին Սրբուհի Երիցեան, VII անեկդոտներ, Ժողովածու Գալուստ Շերմազանեանի, Գրիչ. VIII Միհրդատ Ամերիկեան, կենսագրութիւն, Գ. Շահկեանց, ԱԶԳԱՑԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Արևելեան խնդիրը և հայերը, X Ներսէս պատրիարքի կոնդակը։ ՅԱՒԵԼՈՒԱԾ XI. Ուսումնարանի առողջապահութեան հարցեր, Ա. Բաբայեան, XII յայտարարութիւններ։

Ստորագրուել կարելի է Թիֆլիսում՝ «Փորձի» խմբագրատանը և Կենտրոնական գրավաճառանոցում Օտարաքաղաքացիք կարող են դիմել խմբագրին հեռևեալ հասցէով։

Тифлисъ. Въ Редакцію Армянскаго журнала „ПОРДЗЪ“.

Խմբագիր—Հրատարակիչ Արդար Յովհաննիսեան

ԵՐԵՒԱՆՈՒՄ Աստաֆիևսկայա փողոցի վրա, քաղաքի կենտրոնում ձեռնտու գնով ԾԱԽՎՈՒՄ Է քարից և կիրից շինած մի ՏՈՒՆ։ Տան մէջ կան տասս ԽԱՆՈՒԹՆԵՐ ամբարանոցներով, սառուցատուն և երեսուն և չորս ՍԵՆՆԱԿ ծառաների բնակարաններով և պաշտպամբով տան ամբողջ երկայնութեամբ։ ԲԱԿԻ մեծութիւնը 2000 քառակուսի սաժէն է, բակի մէջ ԱՒԱԶԱՆ կայ։ Տան դիմացի կողմի ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆԸ 63 արշին է, իսկ ԼԱՅՆՈ ԹԻՒՆԸ նոյն կողմից 24 արշին։ Ամբողջ տունը տարեկան 5600 ր. ԵԿԱՄՈՒՏ է տալիս։ Ցիշեալ տունը ԳՆԵԼ ցանկացողները կարող են դիմել Երևան տան տէր Արտեմ Պապիկովին։ Նոյն տան մէջ ցանկանում են յանձնել մէկ ուրիշի ՔԱՂՑՐԵՂԷՆՆԵՐԻ ԽԱՆԹ, պիտանի բոլոր պարագաներով։ ԱՐՏԵՄ ՊԱՊԻԿՈՎԱՆՑ։

3—4

ПОРТНОЙ ИЗЪ ПЕТЕРБУРГА ГЕРМАНЪ. на Гановской улицѣ въ домѣ Усопесіани. Имѣю честь извѣстить почтенеишему публику, что принимаю заказы своими товарами военныя и статскія платья и исполняю собственнымъ присмотромъ и также отдаю на прокатъ разныя костюмы кромѣ того въ моемъ магазинѣ имѣется мужскія и дѣтскія костюмы заказы и продажа производится по весьма умѣреннымъ цѣнамъ.

1—10

ՌՈՒՍԱՑ ԹԷՅԻ ՎԱՃԱՌԱՆՈՅԻՑ նոր ստացվեցան 10000 Ֆունտ Ֆուչանի և Կուախի թէյ սեփական փոխանակութեան 1 ր. 20 կ. մինչև 8 ր. Ֆունտը։ Ֆուչանի թէյի համար ինձանից գնողներից շատերը նամակներով շնորհակալութիւն յայտնեցին, այս ուսեմ ապագայում գնողներից նոյնպէս ստանալ։ Ծախվում է մեծ քանակութեամբ և փոքր։ Փոստայի ծախսը ինձ վրա առնում եմ։ Հասցէն Միքայէլեան կամուրջ, «Кавказъ»-ի խմբագրատան տակ։ Վաճառական Ա. Պոլոսոխին։

6—10

ՍԵՆՆԱԿՆԵՐ քրէհով են տրվում կահկարասիքով և ծառայով 10 ր. մինչև 20 բուբլ ամսական վճարով։ Հարցնել Սապեօրնայա փողոցի վրա զինուորական գիմնազիայի դիմացը Յարութիւնեանցի № 12 տան մէջ։

1—3

Ազգ

Գառնիկ Աղէքսիանոս Յարութիւնեան, որը մականունը Սարբեան Սիվասցի. Կ. Պոլիս Բերայի թաղը ծնած, 18—20 տարեկան, արհեստը գրաշարութիւն, ինքը բարձրահասակ, երկու տարի է որ անգիտացի վաճառականի մը հետ ասկէ (Պոլիսէն) եկած շոգենաւով Փոթի երթալու, և անկէ ալ Թիֆլիս անցնելու նպատակաւ ճամբայ ելած օրէս մինչև այսօր և ոչ մի լուր առնուած է. հայրը մեռած է և մայրը և քոյր մը ունի. ով որ տեսած է յիշեալ երիտասարդը, մարդասիրաբար ազգային լրագրաց իմաց տալու շնորհի ընելը կաղաչուի։

«Նուէր քեռասիր գեղջցիներին» անունով նոր գուրս եկած բրոշիւրը ծախվում է հատը 15 կոպէկով Թիֆլիսի Կենտրոնական և Զաքարիայ Գրիգորեանի գրավաճառանոցներում։ Հարիւրով առնողներին կը լինի 20% զեղջում, եթէ անմիջապէս դառնան դէպի մեզ այս հասցէով. Тифлисъ Григорію Теръ-Меликсетову. въ Сололакахъ, на Сололакской улицѣ, у Вознесенской церкви, въ д. Михаила Галустова, подъ № 110.

Գրիգոր Տէր-Մելիքսեդեկեան։

Բժիշկ Աւետիք Բաբայեան (Բաբայեվ) ընդունում է հիւանդներին Թիֆլիսի բժշկանոցում չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը ջղային և հոգեկան հիւանդութիւններ բժշկելու։ Բացի այդ բժիշկ Բաբայեան (Բաբայեվ) հինգշաբթի և շաբաթ օրերը առաւօտեան 9—10 ժամը ընդունում է իր տանը ներքին հիւանդութիւններ ունեցողներին կամ էլեկտրականութեամբ բժշկելի աղքատ հիւանդներին։ Հասցէն Սերգիևսկայա փողոց, տուն Բայանդուրովի։

7—10

ԼԱՐՇԷԻ խանութում Գոլոմինսկի հրապարակի վրա № 11 ծախվում են ամեն տեսակ թէ պարտիզային և թէ ծաղիկների ՍԵՐՄԵՐ, որոնք նոր են ստացված և բոլորովին թարմ են։

5—10

Въ Кукахъ, на Исарловской улицѣ въ домѣ № 9 ОТДАЕТСЯ ОДНА БОЛЬШАЯ СВѢТЛАЯ КОМНАТА съ отопленіемъ и прислугой. Спросить въ редакціи «МШАКЪ»

ԿՈՒԿԻԱՅՈՒՄ, Խարլովսկայա փողոցի վրա № 9 տան մէջ քրէհով է տրվում մի ՄԵԾ, ԼՈՒՍԱՒՈՐ ՍԵՆՆԱԿ ԳԱՌԵԼԻՔՈՎ և ծառայով։ Հարցնել «Մշակի» խմբագրատանը։

3—10

ՄԱՐՏԻ 24 ՏԵՂԵԿԱՑՈՒՑ ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Մարտի 23-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պոլուիմպերիալը)	8	58
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1500	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1240	—
Վիզրիշնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիզրիշնի »	229	—
Մարսելի կուրսը 248—	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	105	19
Վենայի կուրսը ածէ 113 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը.	5	60
Առևտրական բանկի ակցիան 200 մ.	315	—
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաբաթը բրօցկու	7	30
» միւս տեսակը.	7	20
» չաքար աւազը.	5	40
» տրանզիտը.	6	20
» մաքսը վճարած	12	50
Բումբակը Երևանու Ամերիկայի սերմից.	7	60
Միւս տեսակը հին սերմից.	7	—
Բուրդը թուչի	7	50
» թարաքամի	4	20
Աւիւրը Նորագալու	1	70
» Երևանի.	—	—
Գարին	1	—
Մոմը բնաճարպի (стеар.)	12	60
Մետաքսը Նուխվայ.	200	—
Կախեթունը.	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	40	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մօկօի.	27	—
» միանի	22	—
« Մարտին օլին	18	—

ՀՆՈՒԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները	1	
Ռուսաստան	2	
Աւստրիա	3	
Անգլիա.	4	
Գերմանիա.	2	88
Ֆրանսիա	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ցննդկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 բուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 բուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 բուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ.

	առաւ.	երեկոյեան
Թիֆլիսից	9. 21	5. 18
Գօրի	11. 58	9. 43
Միխայլովօ.	1. 29	11. 57
Ռիօն	6. 47	
Փոթի	9. 40	
	առաւ.	
Փոթիից	9. 13	
Ռիօն	12. 13	
Միխայլովօ.	5. 39	1 37
Գօրի.	7. 5	4. 8
Թիֆլիս.	9. 31	7 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ	90	68	38
Գօրի.	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիօն.	9.	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7. Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիսի տրակտից երեքշաբթի և շաբաթ.

ՆԱՄԱԿՆԵՐ	Կոպ.
Բաց նամակ արժէ	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան	8
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը ժամը 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրաչևիչ ներքին հիւանդութիւններ, Բակատ վենեբական և կաշու հ., Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակատ կուրծքի և ներվային հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Բէյլս աչքի հ.։

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Բակատ վենեբական և կաշու հ.։

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների.

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ. Բակատ կրծքային և ջղային հ., Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան։

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակատ վենեբականնկաչու հ., Բէյլս աչքի հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ԳԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ՇԱՄԱԽԻ. Ա. Տ. Ս. Մ. Թ. Մենք չենք կարող տպել ամեն մարդու նամակը, որի բովանդակութիւնը միայն այն կը լինի թէ այս ինչ յօդուած նրա հեղինակութիւնը չէ։ Ինչի պէտք է ձեզ կասկածեն, երբ դուք մեզ երբէք ոչ աշխատակցել էք և ոչ մեր բաժանորդ անդամ եղել էք։ Մենք մինչև անդամ չը գիտենք, ոյժ ունէք այդպիսի յօդուածներ գրելու թէ ոչ։

—ՇԱՄԱԽԻ. Շ. Շարունակեցէք գրել այդպիսի պատկերներ, ինչպէս «Ես նրան չեմ գընայ»։ Զաքչեցէք բոլոր դասակարգերը. այդ միակ միջոց է մեռած Շամախուն մի փոքր կենդանութիւն տալ։

—Կ. ՊՕԼԻՍ. Հայկակ. Ձեր վերջին նամակը հիանալի է։ Շնորհակալ ենք կաթոլիկների մասին տեղեկութեան համար

Дозволено Цензурою 23 Марта 1879 г. Тифлисъ Տպարան Ֆ. Մարտիրոսեանցի Типографія Мартиросіанца